ԼԵՎՈՆ ՍԱՐԳՍՅԱՆ. Հայոց տոնացույցի ծագումն ու զարգացումը (4–8-րդ դդ.), *Երևան, «Էդիտ Պրինտ» հրատ., 2010, 300 էջ:*

ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի Հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Լ. Սարգսյանի այս աշխատությունը նվիրված է հայոց քրիստոնեական տոնացույցի ծագման և զարգացման հիմնախնդիրներին, որը ժամանակագրական առումով ընդգրկում է շուրջ կես հազարամյակ: Չնայած շատ դեպքերում, առանձին հարցերի քննարկման համատեքստում հեղինակը նույնիսկ ընդլայնել է ժամանակագրական այդ սահմանները: Այս առումով Լ. Սարգսյանի մենագրությունն ունի նաև շատ կարևոր և նույնիսկ՝ արդիական հնչեղություն, չնայած պատմաժամանակագրական որոշակիորեն հիմնավորված սահմանափակումներին:

Ուսումնասիրությունը բաղկացած է հինգ գլուխներից.

Գլուխ Ա.՝ «Համաքրիստոնեական տոնացույցի հայկական տարբերակը և նրա նախօրինակը», Գլուխ Բ.՝ «Համաքրիստոնեական տոնացույցի հայկական տարբերակի զատկացուցակը», Գլուխ Գ.՝ «Հայոց տոնացույցի ընդլայնումը 5-րդ դարի 40-ական թթ.-ից մինչև 8-րդ դարի սկիզբը», Գլուխ Դ.՝ «Հայոց տոնացույցի նոր զատկացուցակը», Գլուխ Ե.՝ «Հայոց տոնացույցի նոր խմբագրությունը»:

Օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկում ընդգրկված են հեղինակի կողմից մշակված արժեքավոր սկզբնաղբյուրներ և ուսումնասիրություններ (այդ թվում՝ ավելի քան ութսուն ձեռագիր հիշատակարաններ):

Լ. Սարգսյանը շատ հստակ ձևակերպել է իր այս հետազոտության նպատակը, որը դիտարկել և քննարկել է վերը նշված հինգ կարևորագույն հիմնախնդիրների ընդհանուր համալիրում: Այստեղ քննարկվել են հայոց համաքրիստոնեական տոնացույցի, նրա նախօրինակի, հին ու նոր զատկացուցակների խմբագրությունների հարցերը՝ ներառյալ հայոց տոնածիսական համակարգում Հովհաննես Օձնեցու կատարած արմատական բարեփոխումները:

Այս աշխատությունը կարելի է համարել աղբյուրագիտական կարևորագույն հենք հայագիտության և մասնավորապես՝ տոնածիսական համակարգի ուսումնասիրության համար, որովհետև վերլուծական բարձր մակարդակ ունեցող այս գրքում հանգամանալից քննարկվել են հայոց տոների և ընդհանրապես՝ տոնածիսական համակարգի ճշգրիտ ակունքներն ու հետագա զարգացումը:

Սույն հետազոտությունը թեև հիմնականում ունի տոմարագիտական ուղղվածություն, սակայն շատ կարևոր է նաև թեմային սերտորեն առնչվող գիտական այնպիսի ճյուղերի համար, ինչպիսիք են՝ ազգագրությունը, պատմագիտությունը, վիմագրությունը և այլն:

Լ. Սարգսյանն անդրադարձել է նաև հայոց տոնացույցի նոր խմբագրության հարցերին: Ըստ հեղինակի՝ Հովհաննես Օձնեցի կաթողիկոսն է ձեռնարկել հայոց տոնածիսական համակարգին առնչվող խնդիրների կարգավորումը:

Հիմնովին գնահատելով այս աշխատությունը, հարկ ենք համարում հատուկ շեշտել նրա արժեքն ընդհանուր հայագիտության, այդ թվում ազգագրության, և մասնավորապես՝ հայոց տոնածիսական մշակույթի ոլորտում: Հեղինակն ամբողջությամբ վերլուծել է հայոց տոնածիսական համակարգի ակունքները: Առաջին հայացքից կարող է թվալ, թե նա սահմանափակվել է պատմական ազգագրության և ընդհանրապես տոմարագիտական շրջանակներում, որը դարձյալ շատ գնահատելի է: Սակայն թեմային սերտորեն

առնչվող այդ պարզաբանումները կարևորվում են նաև հետագա ժամանակաշրջանների համար, քանի որ նույնիսկ մեր օրերում այդ տոների շատ կանոնային և նույնիսկ կենցաղային դրսևորումների որոշակի պատասխաններ մենք կարող ենք գտնել միայն միջնադարյան այդ ակունքներում, որոնց հանգամանալից անդրադարձել է հեղինակը: Այս առումով բավական է ներկայացնել մի քանի բնորոշ օրինակ և ամբողջությամբ պարզ կդառնա այս աշխատության նաև արդի ազգաբանական հնչեղությունը: Պարզվում է, որ ընդհուպ XX դարի սկզբները հայոց կենցաղում պահպանված տոնածիսական առանձին անվանումներ ոչ թե զուտ կենցաղային կամ ժողովրդական նոր կամ համանիշ լրացնող անվանումներ էին, այլ անցյալում հենց այդպես էլ կանոնարկվել են. օրինակ՝ Մեծ Պասը, որը դեռևս Հովհան Մանդակունին ներկայացրել է Ադուհաց անվանաձևով:

Հեղինակը եզրահանգել է, որ համաքրիստոնեական տոնացույցի հայկական տարբերակը հիմնված է նրա երուսաղեմյան տարբերակի վրա:

Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ Լ. Սարգսյանը գրեթե նորովի՝ հույյան և հայոց տոմարների զուգահեռների համատեքստում վերակազմել է Անդրեասի 200-ամյա Զատկացուցակը, որն էական նշանակություն ունի հայ հին մատենագրության ժամանակագրության, հայ ժողովրդի և եկեղեցու պատմության ժամկետային հիմնահարցերի պարզաբանման ու ճշգրտման տեսակետից:

Ուսումնասիրողին հաջողվել է ճշգրտել Շահապիվանի ժողովի տարին և ամիս-ամսաթիվը: Նա պարզել է, որ Շահապիվանի ժողովը տեղի է ունեցել 444 թ. դեկտեմբերի 25-ին՝ Նորաբեր տոնի օրը:

Լ. Սարգսյանը հիմնավորել է նաև Հովհան Մանդակունու խմբագրած «Ընթերցուածոց» գրքում Առաջավորաց պահքի և Բուն Բարեկենդանի կանոնների ավելացումը, որոնք տեղ գտան հայոց հետագա տոնացույցերում: Վերջինս կարևորում ենք այն առումով, որ նշված տոների հետ կապված շփոթը, մասնավորապես կենցաղային դրսևորումներում, նկատվում է անգամ մեր օրերում: Հեղինակը նկատել է, որ Հովհան Մանդակունին հայոց անշարժ տոները վերածել է շարժականի, որով հայոց տոնացույցում հիմք է դրվել հետագայում սրբերի հիշատակի օրերը շաբաթական շարքով դասակարգմանը, և որն արմատավորել է Հովհան Օձնեցին:

Բարձր է հեղինակի վերլուծական ունակությունը: Նյութի քննությունները միաժամանակ և՛ խորքային են, և՛ շատ մատչելի՝ չնայած այն հանգամանքին, որ նա քննարկում է տոմարագիտական շատ բարդ և նույնիսկ՝ վիճահարույց հիմնախնդիրներ:

Գիրքը կարևորվում է ինչպես հայագիտական, այնպես էլ միջազգային տեսակետից, քանի որ առաջադրված գրեթե բոլոր հիմնախնդիրները քննարկվում են այլէթնիկական և համաքրիստոնեական տոնացույցերի համալիրում, որն էլ ավելի է բարձրացնում աշխատության գիտական արժեքը:

ՍԱՄՎԵԼ ՄԿՐՏՉՅԱՆ